ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

2457-Ա « 13 » մայիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՏՎՈԳՐԵՐՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N604-Ն որոշման N 1 հավելվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետով, 34-րդ և 39-րդ կետերով.

1. Թանգարանների միջազգային օրվա առթիվ, թանգարանային գործում ներդրած նշանակալի ավանդի և բարեխիղճ աշխատանքի համար Երևանի քաղաքապետի պատվոգրերով պարգևատրել.

1) «Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ի գիտաշխատող Էլեն Վարդանյանին,

2) «Կարեն Դեմիրճյանի թանգարան» ՀՈԱԿ-ի պարետ Սպարտակ Ղալեչյանին,

3) «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի մարքեթինգի և մենեջմենթի գծով փոխտնօրեն Արմենուհի Ղազարյանին,

4) «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի տնօրեն Կարեն Ազատյանին,

5)«Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի էքսկուրսավար Գոհար Սարգսյանին,

6)«Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի մարքեթինգի բաժնի ղեկավար Հայկ Սայադյանին:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246